

գամանալեր

Երեսիդ դիմակ
ձեռքիդ տոպրակ

փլասթիք ձեռնոցով
կ'իջնաս փողոց

աջ գրպանդ փաստագիր
ձախ գրպանդ անձնագիր

շուկայ-մուկայ չերթալեն
ոտքերս ժանգոտեր են

Քայլերս ծանրացած
ինձմէ ալ՝ շատ հոգնաց

թաղը դառցեր է ամայի
իսկապէս՝ սարսափելի

կամաց կամաց
վերջապէս

հասայ Քառ-ֆուռ մարքէթ
մաքարնա՞ ոչ մի փաքեդ՝

այիւր-մայիւր՞
մի՞ երագէր

հաւկիթ եթէ գտնաս
բախտաւոր են տղաս

պէտքարանի թուղթը ուր՞ է
ուզածիդ չափ փնտռէ

օճառը չի մոռնամ ծո՞՝
Գտայ՝ փառք աստուծոյ

ամա՛ն սուրճն ու շաքարը
սուրճը գտար շաքարը մոռցիր

գինին ու գամանալեր*
այնքան՝ կարեւոր էր

պակեթ* մըն ալ առի
շիտակ տուն գացի

վաչէ
12/4/20
սէն-մորիս
չի-մարիս

(գամանալեր*:ֆրանսական հոտած պանիր) (պակեթ*:ֆրանսական համով հաց)

կէս-կէս

պատուհանս
կէս բաց կէս գոց

աչքերս
կէս քուն կէս արթուն

սիրտս
կէս սեւ կէս ճերմակ

սիկարեթս
կես վառած կես մարած

սուրճս
կես տաք կես պաղ

երկինքը
կես արեւոտ կես ամպոտ

ռատիօս
կես բարձր կես ցած

լուրերը
կես իրաւ կես սուտ

կատուն
կես ուրախ կես տխուր

մէկը դուռիս զանքը զարկաւ
սիրտ չունէի բանալու հարկաւ

վիրուս-միրուսի ատեն
գացող եկող չկար արդէն

երկար բարակ մտածեցի
բանամ նայիմ ո՞վ է ըսի

դուռը բանալուս պէս
կես-կեսը* մտաւ ներս

սկիզբը չի ճանչցայ իրեն
դիմակին ետեւէն

-տունիդ արջեւէն կ'անցնէի
-բարեւ մը տամ ըսի

-օրերէ իվեր
-ձայնդ չեր ելլեր

-անցնիմ նայիմ տեսնեմ
-բանի՞ մը պետք ունիս խնդրեմ

երբ որ բանի մը պետքը ունենամ
քեզի անպայման լուր կուտամ

-յուսամ չի խանգարեցի քեզ
բարի եկեր ես կես-կես
եկուր անցնինք պարտեզ

ծառին շուքին տակը նստանք
մէկս միւսին երկար լուր նայեցանք

ոսկի վանդակի մէջ կորսուած
ծառին ճիւղին վրայ կախուած

վանդակին դուռը բաց էր արդէն
բայց մենք դուրս չէինք ուզեր ելլել

ժամանակը կախուած էր ճիւղէն
մենք խօսեցանք հինէն-նորէն

երկինքէն ինկած թռչուն է կես-կեսը
երբ չորս պատի մէջն ես տունը

կարծես եկեր էր այցելելու
բանտարկեալ մը տեսնելու

երանի անոր որ կես ընկեր մը ունի լաւ
քեզի կես ճամբան չի ձգեր բնաւ

շուտով պիտը գայ ժամանակը
շարունակելու մեր երազանքը

վաչէ
10/5/20
սէն-մորիս
չի-բանտարկուիս

կես-կէսը* իմ լաւագոյն արդիստ նկարիչ ընկերս է, իր անունը Լորան Նիսու է
իրեն անունը «կատակի» համար ես կես-կէս դրած եմ, մայրը հայ եւ հայրը ֆրանսացի ըլլալուն համար

Փարիզ-Երեւան

-այս ամառ միասին երթանք Երեւան
հա՛ որ վրանի՛ս խնթան-մնթան

-ինչո՞ւ համար խնթան եղեր
կ'ըսեն ձեռքերը պարապ չէ եկեր

- ճամպրուկներով պիտի երթանք
մէկ թելիս տակն ալ դո՞ւն անանկ

-ասոնք բնաւ կատու չէ՞ն տեսած
«Էյր-Ֆրանս»ով Երեւան եկող ո՛չ անկասկած

-հո՞գ մի՛ ըներ՛ ընկեր ճամբ...
արդէն ճան-մանով կը խօսսիս կոր լան

-Ա՛ր ա ր ա տ իմ սիրուն՛ քնքուշ արարատ
ան ալ պիտի տեսնես չի սատկած

-արդէն ամսուայ մը ծրագիրը ունիմ
կատուն թուրիստ դարցեր է ես լուր չունիմ

-առաջին շաբաթը Թիւֆէնկքեան պանդոկը ճիշդ քաղաքին կեռպելը
լիքս ճաշակ ունի եղեր իմ քերթելը

-վերնիսաժը քիթիդ տակ
սուվէնիրներդ կը գնես արագ-արագ

-կը նստի՛նք թաքսին
կ'երթանք Էջմիածին

-վերադարձին վարպետ
կը բարձրանանք Ծիծեռնակաբերդ

-թանգարան-մանգարան...
մէկ-մէկ կ'այցելենք ճան

-սրճարան-մրճարան...
պիրան կը խմենք ու վագենք պետքարան

-Մեր թաղի լահմաջուկը՛...
համով՛ բաներէն լուր ունի մեր շունը

-քոքթելի համար կ'երթանք
«Էտէն Փապ» Զասքատ
կը խմենք կը գինովանք ու աստիճաններէն կ'իջնանք բատ-բատ

-գիշերները կ'երթանք հրապարակ

նորի կ'ուտենք պաղպաղակ

-կը լսենք պատեաթ նոստալժիք երգերը...
Երեւանի՛ սիրուն կատու՛ պէխերոյ կամար...

-կը նստինք Մարիոթ
կը ծխենք ծխախոտ

-կ'անցնինք Գոնկրես
կը խսենք էքսփրես

-կ'երթանք Մայխազ
կես գիշերին կը լսենք ժագ

-առտու կանուխ Գարնի-Գեղարդ երթանք
հեռու չէ մէկ քարով երկու տեղ կը տեսնանք

-կը հասնինք Տաշիր
Բիզան հոս չէ ծո՛ աֆտոյէն մի իջիր

-անպայման երթանք Գյումրի
հոն՝ զարեջուրը կը խմուի

-կ'անցնինք Սպիտակ
ապուր մը կ'ուտենք տաք-տաք

-կ'երթանք Դիլիջան
կ'ուտենք պատըլճան

-Գորիս-մորիս
հեռու է հոգիս

-երթանք Ախթալա
ուտենք բախլաւա

-ճամբուն վրայ կ'անցնինք Տաթեւ
կը նստինք ճոպանուղի թեթեւ-թեթեւ

-Ստեփանակերտ՝
անշուշտ վարպետ

-Սյունիկ-մյունիկ
մոռցիր անուշիկ

-Կապան-մապան
ուրիշ անգամ անպայման...

վաչէ
սէն-մորիս
չի-մարիս
23/04/20